

Հարգելի պարոն Արամյան,

Սույն նամակով «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունը (Փինք Արմենիա) ցանկանում է տեղեկություն տրամադրել Ձեզ Հայաստանում ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) մարդկանց իրավունքների իրավիճակի մասին, հայտնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների հետ կապված կազմակերպության մտահոգությունը և հորդորում իրականացնել Սահմանադրությամբ ստանձնած Ձեր լիազորությունները և պարտավորությունները՝ ապահովելու ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների իրացումը:

Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների դեպքերն արձանագրվում են կյանքի ցանկացած ոլորտում՝ ընտանիք, զինված ուժեր, եկեղեցի, օրինապահ մարմիններ, զբաղվածության ոլորտ, հանրային տարածքներ, ժամանցի վայրեր, առողջապահական ու կրթական հաստատություններ, ՁԼՄ-ներ և այլն: Գրեթե յուրաքանչյուր տարածք մեր հասարակության մեջ ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ խտրականության և բռնության կիրառման վայր է: ՓԻՆԲ Արմենիան միայն 2015-2016թթ. Հայաստանում արձանագրել է ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնության և խտրականության 73 դեպք:

Ավելին, 2016թ. «ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում. Տեսությունից իրականություն» հետազոտության<sup>1</sup> տվյալների համաձայն՝ հարցված 200 ԼԳԲՏ անձից 198-ը ենթարկվել և/կամ ականատես է եղել ատելության հիմքով հանցագործությունների 2010-2016թթ ընթացքում: 2010-2016թթ.-ին ուսումնասիրված ատելության հիմքով հանցագործությունների զգալի մասը դրսևորվել է 2015թ.-ին՝ կազմելով 50%, իսկ 2016թ.-ին՝ 16,4%:

ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումներին մեծապես նպաստում է խտրականությունն արգելող օրենսդրության և խտրականության համար պատասխանատվության մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև գործող օրենսդրական դաշտի անկատարությունը, որը ԼԳԲՏ անձանց դարձնում է առավել խոցելի:

Հայաստանում ԼԳԲՏի (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս) անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի և խտրականության հետևանքով ԼԳԲՏ անձինք արտագաղթում են, որն ազդեցություն է ունենում Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա:

2015թ. «ԼԳԲՏ էմիգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա» հետազոտության<sup>2</sup> համաձայն՝ խտրականության պատճառով 2011-2013թթ Հայաստանից արտագաղթել է մոտ 5891 ԼԳԲՏ հայաստանցի, ինչը նշանակում է, որ ԼԳԲՏ արտագաղթողների՝ միայն կրթության գծով ներդրումների մասով հասարակությունը միանվագ կորցրել է մոտ 21 միլիոն

<sup>1</sup> «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ (Փինք Արմենիա) և «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն. «ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում. Տեսությունից իրականություն». Երևան (2016թ.)

<sup>2</sup> «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ (Փինք Արմենիա) և «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն. «ԼԳԲՏ էմիգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա». Երևան (2015թ.)

դուլար: Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի չստացված եկամուտներին, ապա հաշվարկների համաձայն՝ արտագաղթողի հեռանալուց մեկ տարվա ընթացքում 2011-2013թթ. Հայաստանը չի ստացել լրացուցիչ մոտ 88 միլիոն, 365 հազար ԱՄՆ դոլար:

Իսկ բյուջեի եկամուտները 2011-2013թթ. բոլոր 3 տարիներին միասին վերցրած կարող էին մոտ 20 միլիոն դոլարով մեծ լինել, եթե խտրականության պատճառով հեռացած ԼԳՏՏ անձինք մնային Հայաստանում: 2011-2013թթ. ԼԳՏՏ 5891 անձանց արտագաղթի արդյունքում պետական բյուջեն առաջիկա ավելի քան 36 տարիների ընթացքում (մինչև թոշակի անցնելը) կկորցնի մոտ 2 միլիարդ դոլար եկամուտ՝ 2014թ. հունվարի 1-ի գնողունակությամբ:

«Հյուներն ռայթս ութթ»-ի 2017թ. գեկույցում նշվում է, որ 2016թ. Հայաստանի կառավարությունը քայլեր չի ձեռնարկել ԼԳՏՏի անձանց դեմ ասելության խոսքի կամ խտրականությանը վերաբերող հարցերի կարգավորման ուղղությամբ և երկրում շարունակում են ԼԳՏՏի մարդկանց ենթարկել խտրականության, ոտնձգությունների և ֆիզիկական բռնության:

Հասարակության մեջ առկա կարծրատիպերը ու հոմոֆոբիան, պետական պաշտոնյաների կողմից ասելության խոսքի դրսևորումները և ԼԳՏՏ անձանց նկատմամբ ճնշումների արդարացումը երկրում ստեղծում են անպատեղիության մթնոլորտ, ինչը մեծապես վտանգում է ժողովրդավարության իրացումը, ոտնահարում յուրաքանչյուր քաղաքացու Սահմանադրությամբ սահմանված իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև վարկաբեկում Հայաստանի միջազգային հեղինակությունը: Հայաստանի Հանրապետությունում պետք է հաստատվի ՀՀ Սահմանադրական կարգը՝ հանուն մեր հանրության և ժողովրդի ազատության, արդարության, արժանապատվության և բազմամշակութային զարգացման:

Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 1-ի՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Որպես ժողովրդավարական երկիր՝ որի հիմնական ուղենիշը լիբերալ արժեքների ինստիտուցիոնալականացումն ու իրացումն է, կարևորում ենք, որ պետությունը և բոլոր շահագրգիռ կազմակերպություններն ու միությունները պետք է գործեն ՀՀ Սահմանադրության և գործող օրենքների շրջանակներում՝ ունենալու իրենց ներդրումը ժողովրդավարական արժեքների կրող հասարակության կերտման գործընթացում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 29-ի՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Այս նամակի միջոցով մենք ևս մեկ անգամ Ձեզ ենք փոխանցում մեր մտահոգությունն այս խնդրով և կոչ ենք անում իրականացնել Սահմանադրությամբ ստանձնած Ձեր լիազորությունները և պարտավորությունները: Մենք նաև ակնկալում ենք կոնկրետ քայլեր՝

- Մշտադիտարկել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ուղղակի և անուղղակի խտրականության դեպքերը և ուսումնասիրել առկա իրավական կարգավորումները ոլորտում, ինչպես նաև հանդես գալ նոր օրենսդրական կամ առկա օրենքներում փոփոխությունների իրականացման առաջարկով:
- Ապահովել ՀՀ-ում օրենսդրական կարգավորումներ՝ պայքարելու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ՝ ապահովելով հավասար իրավունքներ և հարգանք լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց նկատմամբ:
- Իրականացնել ՀՀ կողմից ստանձնած միջազգային կոնվենցիոն պարտականությունները, մարդու իրավունքների կոնվենցիոն և այլ մարմինների, ներառյալ ՄԱԿ մարդու իրավունքների

խորհրդի, Մարդու իրավունքների կոմիտեի, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի, Ռասիզմի և անհանդուրժողականության եվրոպական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությանն ուղղված բոլոր առաջարկությունները, որոնք առնչվում են ԼԳԲՏ իրավունքների իրացման ապահովմանը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված է, որ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը և հավասար ու անօտարելի իրավունքները աշխարհի ազատության, արդարության ու խաղաղության հիմքն են: Մարդու բնական և հիմնարար իրավունքները չեն տրվում պետության կողմից, յուրաքանչյուր մարդ օժտված է այդ իրավունքներով, որովհետև մարդ է: Իսկ քանի որ յուրաքանչյուր մարդ արդեն իսկ օժտված է իրավունքներով, պետության պարտականությունն է, այլ ոչ թե բարի կամքի դրսևորումը, ապահովել այդ իրավունքների ու ազատությունների ամբողջական իրացումը:

Հարգանքով՝ Նվարդ Մարգարյան

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ նախագահ

-----

**Մայիսի 17-ը հոմոֆոբիայի ու տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրն է:** Հոմոֆոբիան վախճ է, զգվանքը կամ ատելությունը նույնասեռականության, ինչպես նաև նույնասեռական ընկալվող կամ նույնասեռական մարդկանց նկատմամբ:

Նույնասեռականությունը դադարեց համարվել հոգեկան խանգարում, երբ 1990թ. մայիսի 17-ին հրապարակվեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների դասակարգման հերթական համարը:

Դրանից 15 տարի անց 24 հազար հոգու և մի շարք միջազգային կազմակերպությունների ջանքերով այդ օրն ընտրվեց աշխարհում նշելու հոմոֆոբիայի դեմ պայքարի օրը: 2009թ. արշավի անվանը ավելացվեց նաև տրանսֆոբիան, իսկ 2015թ՝ բիֆոբիան: Այժմ հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի օրը նշվում է 100-ից ավելի երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, որը 2010թ-ից է միացել արշավին:

Օրվա նպատակն է աշխարհում ուշադրություն հրավիրել նույնասեռական, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնություններին, ճնշումներին ու խտրականությանը: